ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018թ. մարտի 5-ից 7-ը Կանադա գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Վարդան Գևորգյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ / ԺԱՄԿԵՏԸ**
   Կանադա, 2018թ. մարտի 5-ից 7-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Կանադայի հետազոտողների և վերամշակողների ասոցիացիա /PDAC/

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցել հանքարդյունաբերության ոլորտի բարձր մակարդակի ներկայացուցչություն նախատեսող ամենամյա միջազգային համագումարին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Հանքարդյունաբերության զարգացման հեռանկարները, բնագավառի կառավարման միջազգային փորձը, ոլորտում կիրառվող նորագույն տեխնոլոգիաները և մեթոդները, ֆինանսավորման մեխանիզմները, բնապահպանական հարցեր:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Մասնակցեցի կոնֆերանսի շրջանակներում անցկացվող կառավարությունների ներկայացուցիչների կլոր սեղաններից մեկին, որտեղ իրենց երկրների փորձը ներկայացրեցին նաև Սերբիայի և Բուլղարիայի կառավարությունների ներկայացուցիչները: Ներկայացրեցի վերջին տարիներին Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում իրականացված օրենսդրական բարեփոխումները: Այդ համատեքստում մասնավորապես կարևորվեց երկրաբանական ֆոնդի տեղեկատվության թվայնացումը: Անդրադարձ եղավ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (ԱՃԹՆ) Հայաստանի Հանրապետության անդամակցությանը:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
   Համաժողովի շրջանակներում կազմակերպված ցուցահանդեսին մասնակից առանձին ընկերությունների ղեկավարների հրավիրեցի Հայաստան՝ տեղում ծանոթանալու հանքնարդյունաբերության բնագավառի ներդրումային ծրագրերին:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
   Շարունակական աշխատանքներ տանել հանքարդյունաբերական բնագավառում ներդրումներ ներգրավելու նպատակով:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

13.03.2018թ.